ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոմեքենաների լվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/09» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի օգոստոսի 08-ին կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/09» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 11-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված ավտոմեքենաների լվացման ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ (1-ին չափաբաժնի մասով՝ 319 000 (երեք հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամի չափով և 2-րդ չափաբաժնի մասով՝ 209 000 (երկու հարյուր ինը հազար) ՀՀ դրամի չափով):

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի շրջանակում 14.03.2023թ. կնքված N 2 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարվել է լրացում:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ 08.08.2022Թ. N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/09» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ 14.03.2023Թ. ԿՆՔՎԱԾ N 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 11 » դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մայ Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Դիլանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 08.08.2022թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/09» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված ավտոմեքենաների լվացման ծառայությունների 1-ին չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված 3 480 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամից ծառայությունների մատուցման համար նախատեսված 319 000 (երեք հարյուր տասնինը հազար) ՀՀ դրամի չափով և 2-րդ չափաբաժնի մասով Պայմանագրով սահմանված 22 800 000 (քսաներկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամից ծառայությունների մատուցման համար նախատեսված 209 000 (երկու հարյուր ինը հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը՝

- Պայմանագրի շրջանակում 14.03.2023թ. կնքված N 2 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարել լրացում՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի պայմանները կիրառվում են 01.11.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«Մայ Պրինտ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Մ. Խորենացի 2 նրբ. 38տ
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02811826
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 15100141534900
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Դ. Դիլանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 11 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 3 համաձայնագրի

(Հավելված N 2
«08» «08» 2022 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-22/09» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111180/2	Ավտոմեքենաների լվացման ծառայություններ	460 125	699 375	699 375	699 375	938 625	938 625	938 625	957 000	957 000	1 276 000	**1 276 000**
2	50111180/3	Ավտոմեքենաների լվացման ծառայություններ	120 584	183 284	183 284	183 284	245 984	245 984	245 984	250 800	250 800	459 800	**459 800**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մայ Պրինտ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Խորենացի 2 նրբ. 38տ
ՀՎՀՀ՝ 02811826
Հ/Հ՝ 15100141534900
«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Դ. Դիլանյան

/ստորագրություն/
Կ.Տ.